ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Նարեկ Մինասյան
ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության ծառայողական քննության բաժնի տեսուչ

Քրեական հետապնդումը բազմեզր հասկացություն է, ուստի սխալ է դրան վերագրել միայն քրեական դատավարության գործառույթ[1]: Այն նաև որոշակի դատավարական գործողությունների համակարգ է, որը կարգավորվում է գործող քրեադատավարական օրենսդրությամբ և ներառում է բազմաթիվ տարրեր[2], որոնցից առավել կարևոր են՝

1) քրեական հետապնդումն իրականացնելու ընթացակարգը,
2) քրեական հետապնդման սուբյեկտները,
3) անձինք, որոնց նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդումը,
4) քրեական հետապնդման նպատակը:

Քրեական հետապնդման նպատակը դատավարական գործողությունների համակարգն ու միջոցներն են, որոնց միջոցով իրականացվում է քրեական հետապնդումը: Գործող քրեադատավարական օրենսդրությունում այն սահմանված է բավականին մանրամասն, հստակ ու միանշանակ: Դրանով ապահովվում են երաշխիքներ ընդդեմ քրեական հետապնդում իրականացնելու լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց ցանկացած կամայականության, որը կարող է հանգեցնել քաղաքացիների իրավունքների և ազատությունների խախտմանը:

Ընդսմին, բավականին բարդ է սահմանել դատավարական գործողությունների ամբողջ շրջանակը: Օրինակ՝ կասկած չկա, որ մեղադրանք առաջադրելը քրեական հետապնդման ընթացակարգ է (ՀՀ քր.դատ.օր.-ի 203 հոդված): Սակայն դժվար է մեղադրյալի հարցաքննությունը նույնքան միանշանակորեն համարել քրեական հետապնդման ընթացակարգ: Մի կողմից նման հարցաքննությունը մեղադրանք առաջադրելու մասն է, բայց մյուս կողմից այն չի հետապնդում քրեական հետապնդման առջև դրված նպատակներ՝ բացահայտելու հանցագործություն կատարած անձին:

Այսպես, ՀՀ քր.դատ.օր.-ի 212 հոդվածի համաձայն, քննիչը պարտավոր է նախքան հարցաքննությունը պարզել՝ մեղադրյալն արդյոք իրեն մեղավոր ճանաչում է առաջադրված մեղադրանքում: Նշյալ պահանջը ոչ միայն հղում է կատարում անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշմանը, այլև շեշտում է, որ նման հարցաքննությունն այնքան անխզելիորեն է կապված մեղադրանք առաջադրելու հետ, որ դա կարելի է դիտել որպես այն առաջադրելու ընթացակարգի մաս: Սակայն մյուս կողմից, համաձայն գործող քրեադատավարական օրենսդրության, մեղադրյալի հարցաքննությունը քննչական գործողություն է, որն ունի փոքր-ինչ այլ նպա-

[1] Տե՛ս **Дикарев И.Г.** Уголовное преследование: уточнение понятия // Российская юстиция. - М.: Юрист, 2013, № 9, էջ 23-25:
[2] Տե՛ս **Земляницин Е.И.** Понятие и механизм уголовного преследования // Актуальные проблемы уголовно-процессуальной политики Российской Федерации: материалы международной научно-практической конференции (Омск, 12 апреля 2013 г.). - Омск: Изд-во Омск. юрид. акад., 2013, էջ 199-203:

տակներ, քան քրեական հետապնդումը: Այն ուղղված է ապացույցներ ձեռք բերելուն, որոնք թույլ են տալիս պարզել կատարված հանցագործության բոլոր հանգամանքները: Դրան հատուկ ուշադրություն է դարձվում ՀՀ քր.դատ.օր.-ի 212 հոդվածի 7-րդ կետում, որտեղ ասվում է, որ մեղադրյալը հարցաքննվում է առաջադրված մեղադրանքի էության վերաբերյալ:

Ինչպես տեսնում ենք, բավականին բարդ խնդիր է սահմանել դատավարական այն գործողությունները, որոնք կազմում են քրեական հետապնդման ընթացակարգը[1]: Սակայն դա անհրաժեշտ է, քանի որ օգնում է լուծելու քրեադատավարական օրենքը կիրառելու պրակտիկայում առաջացող խնդիրները, որոնց էությունը քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների և օրինական շահերի սահմանափակման թույլատրելի սահմանները որոշելն է: Անհրաժեշտ է սահմանել չափորոշիչ, որի օգնությամբ հնարավոր լինի սահմանազատել քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողությունները վերջինիս հետ անմիջականորեն կապ չունեցող մնացած բոլոր դատավարական գործողություններից:

Նման չափորոշիչներից է քրեական դատավարությունում ներգրավված անձանց իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը սահմանափակելը: Արդեն բազմիցս նշվել է, որ քրեական հետապնդման առանձնահատկություններից մեկն այն է, որ ենթադրում է այն անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի սահմանափակումը, որոնց նկատմամբ դա կիրառվում է: Ընդ որում, դա կարող է լինել բավականին լուրջ սահմանափակում, այսինքն՝ անձը, որի նկատմամբ դա կիրառվում է, կարող է բավականին լրջորեն տուժել իր իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի սահմանափակման առումով: Բայց, դրանով հանդերձ, նման սահմանափակումը ոչ միայն օրինական է, այլև սահմանադրական: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25 և 27 հոդվածներում նախատեսված են ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության իրավունքները: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածում սահմանված է, որ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով»: Այսինքն՝ նշյալ իրավունքի սահմանափակումը թույլատրվում է համապատասխան խափանման միջոց ընտրելու դեպքում, որը ամրագրված է քրեադատավարական օրենսգրքում:

Մյուս չափորոշիչն այն է, որ վերոնշյալ ընթացակարգերը կիրառելի են միայն հատուկ սուբյեկտների նկատմամբ, որոնց մասին առանձնահատուկ նշված է քրեադատավարական օրենքում, ինչպես նաև այն անձանց, որոնք թեև դեռ ներգրավված չեն որպես մեղադրյալ կամ կասկածյալ, սակայն ենթադրաբար մեղավոր են հանցագործություն կատարելու մեջ[2]:

Այսուհանդերձ, ամենակարևոր չափորոշիչն այն է, հանուն որի իրականացվում են համապատասխան դատավարական գործողությունները: Քրեական հետապնդումը, ինչպես արդեն նշել ենք, նպատակ ունի բացահայտել հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձին: Քննչական գործողությունները ապացույցների

---

[1] Տե՛ս **Дациева Х.Г.** Уголовное преследование - законодательный пробел в определении // Юридический вестник Дагестанского государственного университета. - Махачкала: ИПЦ ДГУ, 2012, № 4, էջ 94-96:

[2] Տե՛ս **Емляницин Е.И.** К вопросу о соотношении понятий "уголовное преследование", "обвинение", "подозрение", "предварительное расследование" // Вестник Омской юридической академии. - Омск: НОУ ВПО "Омский юрид. ин-т", 2013, № 2 (21), էջ 126-129:

հավաքման աղբյուր են, որոնց միջոցով լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության պահպանմամբ պարզվում են կատարված հանցագործության հանգամանքները[1]: Ուստի դրանք կարող են նաև դիտվել որպես քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողություններ, սակայն պայմանով, որ այդ քննչական գործողությունները ուղղված լինեն կոնկրետ անձի մեղքն ի ցույց դնող հանգամանքների բացահայտմանը:

Վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողությունների շարքին են դասվում.

1) քրեական հետապնդում առաջացնող դատավարական գործողությունները (ՀՀ քր.դատ.օր.-ի 34 հոդված),

2) համապատասխան խափանման միջոց ընտրելն ու կիրառելը,

3) մեղադրանք առաջադրելն ու այն պաշտպանելը,

4) հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձին ձերբակալելը,

5) քննչական գործողությունները՝ պայմանով, որ դրանց օգնությամբ գործին կցվեն մեղադրական ապացույցները:

Վերոնշյալ բոլոր դատավարական գործողությունները հիմնականում մանրամասնորեն կանոնակարգված են քրեադատավարական օրենքում: Առավել հաճախ դրանք ոչ թե մեկ, այլ մի քանի փոխկապված գործողություններ են, որոնք ուղղված են քրեական հետապնդման միանգամայն որոշակի նպատակի հասնելուն: Այսինքն՝ դրանք նաև փոխկապված գործողությունների համակարգ են[2]: Որպես կանոն՝ այդ դատավարական գործողությունները կանոնակարգող նորմերն իրականացնելը հանգեցնում է բավականին կուռ և հաջորդական ալգորիթմի կառուցման, որին հետևելը թույլ է տալիս օպտիմալացնել քրեական հետապնդումը:

Սակայն պետք է նշել նաև, որ քրեադատավարական օրենսդրությունում դատավարական գործողությունները ոչ միշտ են միանշանակ կանոնակարգված: Դա մասնավորապես վերաբերում է այն դատավարական գործողություններին, որոնցով հարուցվում է քրեական հետապնդումը: Այսպես, ՀՀ քր.դատ.օր.-ի 4-րդ գլուխը նվիրված է քրեական հետապնդմանն ու դրա տեսակներին: Սակայն այնտեղ ոչինչ ասված չէ այդ հետապնդումը հարուցելու կարգի մասին: Այդ հարցի պատասխանը չի տրվում նաև ՀՀ քր.դատ.օր.-ի 25-րդ գլխում: Այնտեղ բավականին մանրամասնորեն կանոնակարգված է քրեական գործ հարուցելու կարգը, սակայն ոչինչ ասված չէ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ: Միևնույն ժամանակ թեև քրեական գործի ու քրեական հետապնդման հարուցումը փոխկապված են, սակայն դրանք նույն բանը չեն: Չէ՞ որ քրեական գործը հարուցվում է ոչ միայն կոնկրետ անձի նկատմամբ, այլև կատարված հանցագործության փաստի առթիվ, ընդ որում, այդ հանցագործությունը կատարած անձը քրեական գործ հարուցելու պահին կարող է և հայտնի չլինել: Այսպես, ՀՀ քր.դատ.օր.-ի 175 հոդվածում ասվում է, որ քրեական գործ հարուցվում է դրա առիթների ու հիմքերի առկայության դեպքում: Դրանով հանդերձ, ոչինչ ասված չէ այն մասին, որ դա հարուցվում է կոնկրետ անձի

---

[1] Տե՛ս **Шрам Ю.И.** Понятие и сущность уголовного преследования // Уголовно-процессуальные и криминалистические проблемы борьбы с преступностью: Материалы научно-практической конференции, 25 марта 2010 г.. - Орел: ОрЮИ МВД России, 2010, էջ 193-197:

[2] Տե՛ս **Панферов М.В.** Понятие уголовного преследования: содержание, формы и виды // Законность и правопорядок в современном обществе: сборник материалов II Международной научно-практической конференции: в 2-х частях. Часть 2. - Новосибирск: Изд-во НГТУ, 2010, էջ 240-245:

նկատմամբ: Ուստի չի կարելի քրեական գործ հարուցելը նույնացնել քրեական հետապնդում հարուցելու հետ: Չնայած ՀՀ Վճռաբեկ դատարանը, անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունից ելնելով, քրեական գործի հարուցման փուլում հնարավոր է համարում անձի մասնակցությունը համապատասխան բողոքի քննությանը: Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանը Համբարձում Հարությունյանի վերաբերյալ բողոքի քննությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «... երբ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով քննվող բողոքն անմիջականորեն առնչվում է անձի իրավունքներին և օրինական շահերին, ապա վերջինս պետք է տեղեկացվի այդ բողոքի դատական քննության մասին, և նրան պետք է հնարավորություն տրվի մասնակցելու նշված բողոքի քննությանը:

Սույն գործով Հ. Հարությունյանի կողմից ներկայացված բողոքն անմիջականորեն առնչվում էր Հ. Ալեքսանյանի իրավունքներին և օրինական շահերին, քանի որ վերաբերում էր նրա կողմից ենթադրաբար կեղծիք կատարելու վերաբերյալ հաղորդման կապակցությամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմանը: Ուստի, բողոքի քննության կապակցությամբ բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննություն կատարելու նպատակով Առաջին ատյանի և Վերաքննիչ դատարանների կողմից Հ. Ալեքսանյանը պետք է տեղեկացվեր վերոնշյալ բողոքի դատական քննության մասին, և նրան պետք է հնարավորություն տրվեր մասնակցելու դրա քննությանը»[1]:

Ներկայումս քայլեր են ձեռնարկվում քրեադատավարական օրենսդրությունում այդ բացը լրացնելու ուղղությամբ: Ներկայացվել է ՀՀ քր.դատ.օր.-ի նախագիծը, որի 191 հոդվածի համաձայն՝ սահմանվել է այն սուբյեկտը, որը լիազորված է հարուցելու քրեական հետապնդում: Այդ սուբյեկտը դատախազն է, ով անձին որպես մեղադրյալ ներգրավելու իր որոշմամբ հարուցում է քրեական հետապնդում:

Քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողությունների մյուս խումբը խափանման միջոցն ընտրելուն ուղղված դատավարական գործողություններն են: Համաձայն ՀՀ քր.դատ.օր.-ի 135 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ խափանման միջոց ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել վերագրվող արարքի բնույթը և վտանգավորության աստիճանը, որը մեղսագրվում է համապատասխան մեղադրյալին: Այսինքն՝ այստեղ միանգամայն ակնհայտ է խափանման միջոցի կապը ոչ միայն քրեական հետապնդման, այլև մեղադրանքի հետ, քանի որ նշյալ նորմը ցույց է տալիս, որ խափանման միջոց ընտրելը ըստ էության առաջադրված մեղադրանքի հետևանքն է:

Որպես քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողություն խափանման միջոց ընտրելը սահմանափակում է այն անձանց իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, որոնց նկատմամբ այն ընտրվում է: Ընդ որում, նշանակություն չունի, թե ինչ խափանման միջոց է ընտրվում, քանի որ դրանցից ցանկացածն ուղղված է այն անձի իրավունքները սահմանափակելուն, որի նկատմամբ դա կիրառվում է:

Ինչպես ասվեց, քրեական հետապնդումն իրականացվում է մեղադրանք առա-

[1] ՀՀ Վճռաբեկ դատարանի 2011թ. հուլիսի 13-ի Համբարձում Հարությունյանի որոշումը, ԵԿԴ /0004/11/12:

ջադրելու և պաշտպանելու գործողությունների համակարգում[1]: Ընդ որում, չի կարելի նույնացնել բուն մեղադրանքը քրեական հետապնդման հետ: Չի կարելի նաև մեղադրանքը ստորադասել քրեական հետապնդմանը: Այդ երկու հասկացությունները թեև իմաստային առումով մոտ են, սակայն նույնական չեն: Ճիշտ կլիներ պնդել, որ դրանք երկու փոխպայմանավորված հասկացություններ են, քանի որ չի կարելի խոսել քրեական հետապնդման մասին առանց մեղադրանքի, և միևնույն ժամանակ չի կարելի խոսել մեղադրանքի մասին քրեական հետապնդման ընթացակարգից դուրս:

Քրեական հետապնդման էական տարրերից են քրեական հետապնդման սուբյեկտները: Նրանք այն պաշտոնատար անձինք են, որոնց քրեադատավարական օրենքը օժտել է քրեական հետապնդումը կազմող դատավարական գործողություններ կատարելու իրավունքով: Հաշվի առնելով, որ քրեական հետապնդումը լրջորեն ոտնահարում է անձի իրավունքները, ում նկատմամբ այն կիրառվում է, օրենքով սահմանվում է անձանց բավականին նեղ շրջանակ, որոնք կարող են իրականացնել քրեական հետապնդում: Նրանց թվում են, մասնավորապես, դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը: Այդ անձանց շրջանակն ավելի է սահմանափակվում առանձին դատավարական գործողություններ իրականացնելու մասին որոշումներ կայացնելու անհրաժեշտության դեպքում, որոնք, օրենսդրի կարծիքով, ուրիշների համեմատ է՛լ ավելի են սահմանափակում քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները: Օրինակ՝ համաձայն ՀՀ քր.դատ.օր.-ի 136 հոդվածի 2-րդ մասի՝ կալանավորումը և գրավը կիրառվում են միայն դատարանի որոշմամբ:

Քրեական հետապնդում կարող է իրականացվել միայն այն անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ առկա են բավարար ծավալի ապացույցներ, որոնք թույլ են տալիս ենթադրել կատարված հանցագործությանը նրանց մեղսակից լինելու մասին[2]: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ապացույցների այդ ծավալը բնավ չի ենթադրում, թե դա բավարար է համապատասխան անձի մեղավորության մեջ առանց երկմտելու վստահ լինելու համար: Այդ ծավալը բավական է միայն համապատասխան անձի մեղավորության մասին ենթադրություն անելու և քրեական հետապնդում հարուցելու համար: Ընդ որում, քրեական հետապնդումը համապատասխան հանցագործությունը կատարելու մեջ կոնկրետ անձին մերկացնելու գործընթաց է, որը ենթադրում է, ի թիվս այլ բաների, գործողությունների իրականացում՝ ուղղված այդ անձի մեղավորությունը հաստատող ապացույցներ ձեռք բերելուն:

Քրեական հետապնդման դատավարական հռչակումը կարևոր է ոչ միայն մեղադրող կողմի, այլև պաշտպանության կողմի համար: Անձը, իմանալով իր նկատմամբ քրեական հետապնդում սկսված լինելու մասին, հնարավորություն է ստանում պլանավորելու և ձեռնարկելու գործողություններ՝ ուղղված արդյունավետ պաշտպանություն կազմակերպելուն: Մասնավորապես, այդ անձը հնարավորություն է ունենում ժամանակին ներկայացնելու ապացույցներ, որոնք արդարացնում

---

[1] Տե՛ս **Калинкин А.В.** Подозрение и обвинение как формы осуществления уголовного преследования // Вестник Саратовской государственной юридической академии. - Саратов: ФГБОУ ВПО "Сарат. Гос. юр. акад.", 2013, № 6 (95), էջ 193-198:

[2] Տե՛ս **Матвиенко И.В.** К вопросу о целях и задачах уголовного преследования // Актуальные проблемы борьбы с преступлениями и иными правонарушениями: материалы десятой международной научно-практической конференции. - Барнаул: Изд-во Барнаул. юрид. ин-та МВД России, 2012, Ч. 1, էջ 128-130:

են իրեն և առ ոչինչ են դարձնում մերկացնող ապացույցները: Դա թույլ է տալիս խոսել այն մասին, որ քրեական հետապնդման նորմատիվ ամրագրումը երաշխավորում է քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, խոչընդոտում է քրեական դատավարությունում որոշումներ կայացնելու լիազորություններով օժտված պաշտոնատար անձանց կողմից կամայականությունները:

Հարկ է նշել, որ թեև քրեական հետապնդման տեսանկյունից իմաստ ունի առանձնացնել անձին, ում նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդումը, քրեական դատավարության տեսանկյունից այդ հասկացությունը անորոշ է և առանձնապես իմաստ չունի[1]: Այսպես, գործող քրեադատավարական օրենսդրությունում որպես նման անձ նշվում են մեղադրյալն ու կասկածյալը: Բացի այդ, պետք է նշել, որ քրեական հետապնդում կարող է կիրառվել նաև այն անձի նկատմամբ, որին դեռ չի տրվել մեղադրյալի կամ կասկածյալի կարգավիճակ: Օրինակ, համաձայն ՀՀ քր.դատ.օր.-ի 175 հոդվածի, քրեական գործ կարող է հարուցվել հանցագործության հատկանիշների առկայության փաստով, ընդ որում՝ առանց նշելու դրան մասնակից անձին: Այդուհանդերձ, դրան հաջորդող դատավարական գործողությունները, որոնք պետք է իրականացնի քննիչը, պիտի ուղղված լինեն կոնկրետ անձի մեղավորությունը բացահայտող ապացույցների ստացմանը: Այսինքն՝ առկա կլինեն քրեական հատապնդմանը բնորոշ առանձին հատկանիշներ: Օրինակ, համաձայն ՀՀ քր.դատ.օր.-ի 229 հոդվածի, անձնական խուզարկություն կատարելը ոտնահարում է քաղաքացիների անձնական անձեռնմխելիության իրավունքը: Այն կատարվում է ոչ միայն կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, այլև ուրիշ անձանց: Առանձին դեպքերում այդ անձինք հետագայում կարող են դառնալ կասկածյալներ: Նման խուզարկությունն ինքնին վկայում է այն անձի նկատմամբ քրեական հետապնդման մասին, որը դեռ չի ճանաչվել կասկածյալ կամ մեղադրյալ:

Քրեական հետապնդման կարևոր և ըստ էության որոշիչ տարրը դրա նպատակն է[2]: Դրանով է պայմանավորվում բոլոր դատավարական գործողությունների բնույթը, որոնցով իրականացվում է քրեական հետապնդումը: Ընդ որում, նպատակն է ձևավորում բոլոր այդ գործողությունների ամբողջականությունը՝ որպես միասնական համակարգ: Քրեական հետապնդման նպատակը կոնկրետ հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձին բացահայտելն է: Դա ենթադրում է, որ իրականացվող բոլոր դատավարական գործողությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակ ունեն ձեռք բերելու մեղադրական ապացույցներ: Հաշվի առնելով, որ նման ապացույցները հետագայում հանդես են գալիս որպես հիմքեր՝ համապատասխան անձի քրեական հետապնդման նպատակով կարևոր որոշումներ ընդունելու համար, քրեական հետապնդման նպատակը կարելի է դիտել որպես նման որոշման նախադրյալներից մեկը:

Քրեական դատավարության թե՛ տեսության մեջ, թե՛ պրակտիկայում հանդիպող հիմնախնդիրներից մեկը քննիչին հնարավորություն տալն է՝ համադրելու վերոնշյալ նպատակը մեկ այլ նպատակի հետ, որը նույնպես առաջադրում է քրեադա-

---

[1] Տե՛ս **Дикарев И.С.** Объект публичного уголовного преследования и значение его правильного определения // Правоведение. – С.-Пб.: Изд-во С.-Петербург. ун-та, 2007, № 2, էջ 66-73:

[2] Տե՛ս **Ильин С.И.** К вопросу о цели и задачах уголовного преследования // Уголовное судопроизводство. - М.: Юрист, 2007, № 4, էջ 16-19

տավարական օրենսդրությունը, գործի բոլոր հանգամանքները օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանիորեն հետազոտելը: Հնարավո՞ր է համադրել այս՝ առաջին հայացքից անհամադրելի նպատակները: Կարծում ենք՝ այստեղ որևէ հակասություն չկա: Ինչպես նշվել է վերևում, քրեական հետապնդումը սկսվում է միայն դրա համար բավարար ծավալի և որակի ապացույցների առկայության դեպքում: Այսինքն՝ ակնհայտ է, որ դրանք ստանալու համար անհրաժեշտ է իրականացնել քննչական և այլ դատավարական որոշակի գործողություններ, որոնք էլ հնարավորություն կտան հավաքելու այդ ապացույցները: Նշյալ ապացույցները կարելի է ձեռք բերել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության շնորհիվ: Միավորվելով մեկ համակարգում, հասնելով որոշակի ծավալի՝ այդ ապացույցները ձեռք են բերում միանգամայն որոշակի նշանակություն՝ ենթադրաբար բացահայտելով հանցագործության մեջ մեղավոր անձին: Սակայն նշյալ ապացույցները ձեռք բերելն էլ բնավ չի նշանակում քննիչի լիակատար հրաժարում իր կողմից իրականացվող բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունից: Նախաքննության ամբողջ ընթացքում քննիչը առաջնորդվում է միայն համապատասխան անձի մեղավորության վերաբերյալ առկա ապացույցներով հիմնավորված ենթադրություններով: Նա լիակատար համոզվածություն չունի: Հենց դա էլ հիմք է ծառայում երաշխավորելու բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության իրականացումը:

СУЩНОСТЬ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ И ЕГО ХАРАКТЕРНЫЕ ПРИЗНАКИ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

Нарек Минасян
Инспектор Отдела должностного расследования
Департамента внутренней безопасности Полиции РА

Принимая во внимание факт, что уголовное преследование многогранное понятие, которое не может быть определено только как функция уголовного судопроизводства, необходимо рассмотреть его с других характерных для него сторон. Уголовное преследование также система определенных действий, которая регулируется Уголовно-процессуальным законодательством. Так как уголовное преследование процессуальных действий оно включает в себя многие элементы лежащие в ее основе.

THE NATURE OF CRIMINAL PROSECUTION AND ITS CHARACTERIZING FEATURES AT THE CRIMINAL PROCEEDINGS

Narek Minasyan
Inspector at the Chair of Service Inspection of the Department of Internal Security of the RA Police

Taking into consideration the fact that criminal prosecution is a multifaceted concept which cannot be defined only as a function of the criminal proceedings, it becomes necessary to consider it in the view of its other typical sides. Criminal prosecution is also a system of certain actions which is regulated by the Criminal Procedural Code. Since it is a system of procedural actions, criminal prosecution includes most of its underlying elements.

Բանալի բառեր – *քրեական հետապնդում, քրեական հետապնդման հարուցում, քրեական հետապնդման սուբյեկտներ, մեղադրանք, մեղադրյալ*
Ключевые слова: *уголовное преследование, возбуждение уголовного преследования, субъекты уголовного преследования, обвинение, обвиняемый*
Key words: *criminal prosecution, initiation of criminal prosecution, subjects of criminal prosecution, defendant, charges*